Սրապեան՝ կը վարժին հոգևորական կենաց մի-ջոցները ուսանելով և ազգային դպրութեանց մէջ յառաջելով 1։ Ապա ուսանողացմէ ոմանք բոլորովին հոգևորական կենաց կը նուիրեն զիրենք, և այլք Նախիջևանու կամ այլ եկեղեցեաց մէջ դպրաց պաշտօն կը վարեն։

Վանքիս եկեղեցւոյն մտից աջակողմեան պատին այս յիշատակարանս կարդացի. «Շնորհաքն Աստուծոյ կառուցի զՍուրբ Խաչ վանքս, 'ի սմա զդրպրոց և զտպարան, ես Սանահնեցի Արղութեանց Շիոշ — Բէկի որդի, և սուրբ Էջմիածնայ Նուիրակ Ռուսաց երկրի Հայոցս առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս, 'ի կայսերութեան ամենայն Ռուսաց Եկատերինէ Ալէքսեյօվնայի երկրորդի, և 'ի հայրապետութեան Հայոց Տեառն Ղուկասու, աշխատութեամբ հոգևոր որդւոյ իմոյ Բայազիտցի Կարապետ վարդապետի։ Օծեալ եղև յամի Տեառն 1791 և 'ի Հայոց թուականի 1240, 'ի սեպտեմբերի։ Այս յիշատակարանի մարմարիոնեայ քառակուսի քարը, ինչպէս կ'երևայ յետ 'ի հիմանց նորոգութեան տաճարին՝ վերստին ագուցած են որմին մէջ, վասն զի այլ նոր յիշատակարան մի կը ծանուցանէ մեզ, թէ 1863 ին «Ի հիմանց նորոգեցաւ այս Սուրբ Խաչ եկեղեցին՝ յորդորանաք Գ. երպ. Տեառն Գաբրիելի Այվազեան, հոգաբարձութեամբ ՊՊ. Գէորգայ Խաթրանեան և Ալեքսանդրի Ալաճալեան»։

1. Այս դպրոցս Մարգասիրական ընկերութեան խնամով և նպաստիւք կը յառաջադիմէ. իսկ այդ ընկերութիւնը իւր արդիւնքներով, պտուղ է անխոնջ աշխատութեանց իմ սա-պընչականի, Պ. Եպիփանու Պոյպոյեան։